


Ացետոքլոր

Ացետոքլորը համակարգային (ներբուսային), նախաձլային, արմատային և ընտրողական ազդեցության մոլախոտասպան նյութ է՝ մշակված «Մոնսանտո» և «Ջենեկա» ընկերությունների կողմից:

Ոչ վաղ անցյալում ացետոքլորը մոլախոտերի դեմ բույսերի պաշտպանության բազմաթիվ պատրաստուկների կազմության մեջ մտնող ամենատարածված ազդող նյութերից էր:



Կառուցվածքային բանաձևը



Եռաչափ բանաձևը

Ազդող նյութը	ացետոքլոր
Գրանցման համարը	34256-82-1
Քիմիական բանաձևը	C ₁₄ H ₂₀ ClNO ₂
Պատրաստուկային ձևը	խտացված էմուլսիա
Քիմիական դասը	քլորացետամիդներ (ամիդներ, քլորացետամիդներ)
Ներթափանցման եղանակը	ներբուսային ազդեցության թունաքիմիկատ
Գործողության բնույթը	ընտրողական ազդեցության հերբիցիդ
Վտանգավորության դասը մարդու համար	II
Վտանգավորության դասը մեղունների համար	III
Մշակաբույսը	արևածաղիկ, եգիպտացորեն, սոյա, հլածուկ և այլն

Ացետոքլորի ազդեցության մեխանիզմը

Ացետոքլորն, այլ քլորացետամիդների նման, համարվում է ծիլերի արգելակիչ և ճնշում է բույսերի արմատներում բջջային շնչառության գործընթացները: Դրա գործողության մեխանիզմը բջիջների բաժանման արգելակումն է: Ացետոքլորը հողում ներմուծվելուց հետո մտնում է հողի վերին շերտում և արմատային համակարգի ու բողբոջների միջոցով ներթափանցում մոլախոտային բույսերի մեջ: Այս պատրաստուկի ազդեցությունը մոլախոտերի վրա անդառնալի է, որի արդյունքում դրանք մահանում են:

Մոլախոտերի խոցելի տեսակներ

Զգայուն մոլախոտերն ամենից առաջ հատիկային մշակաբույսերն են՝ հավակորեկ, հավակորեկ թելիկաձև, աղվեսագի, գավարսախոտ, խոզանիտո կանաչ, մատնախոտի տեսակներ, դաշտավլուկ միամյա, որոմ բազմաձաղիկ, ինչպես նաև երկշաքիլավորները՝ մորմ սև, հավակատարի տեսակներ, ծտապաշար սովորական, անմոռուկ դաշտային, խաբբուկ սովորական, գալինսոգա մանրաձաղիկ, կակաչ ինքնացան, խուլ եղինջ մանուշակագույն, հալնորուկ սովորական, դանդուռ բանջարանոցային, աղաժսարոտ դաշտային, աստղիկ միջակ, ջրջրուկ:

Չափավոր զգայուն տեսակներ՝ հացազգիներ՝ կորեկ ցանքային, երկշաքիլավորներ՝ թելուկ հիբրիդային, թելուկ բազմասերմ, թելուկ սպիտակ, մատիտեղ սաղարթաձավալ, ճնճղկապաշար, աովի մատիտեղ, վահշիժակ դաշտային, վահշիժակ պարսկական:

Մոլախոտի դիմացկուն տեսակներ՝ կորեկի տեսակներ, մատիտեղ, թելուկ սպիտակ, խրբուկ, հավակատար և այլն, ինչպես նաև տղտորիկ թեոֆրաստի, հլածուկ, հոռոմ-թելուկ ոստատարած, կաթնբեկ դաշտային, բողկուկ վայրի, դառնափուշ սովորական, մանուշակ դաշտային:

Ացետոքլորի հիմքով պատրաստուկներ



Տրոֆի 90 ԽԷ, Հարնես ԽԷ, Բերկուտ ԽԷ, Կրաստու ԽԷ, Հարիուս ԽԷ, Վզյոտ ԽԷ, Ացետոքլոր ԽԷ, Կլոցես ԽԷ

Հայաստան ներկրվում է Վալսազարդ պատրաստուկը Մեքսիկայից:

Արտադրող ընկերություններ

Մոնսանտո, «Դեյագրոսայենսիզ» ՍՊԸ, «Ագրոէքսպերտ Գրուպ» ՍՊԸ, «ԷյԷֆԴի Բեմիքալզ» ՍՊԸ, «ՖՄՌուս» ՓԲԸ, «Ագրոռուս ընդ Կո» ՍՊԸ, «ՔիմԱգրոՄարքեթինգ» ՍՊԸ,

«Ագրոթրեյդ» ՍՊԸ, «ԱԳՌՌԻՍՔԻՄ» ՍՊԸ

Ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և կիրառման հետ կապված խնդիրները

• Հողում կապակցված Ֆսացորդային քանակների կուտակում, ներթափանցում ստորերկրյա և մակերեսային ջրեր, ցանքաշրջանառության մեջ զգայուն մշակաբույսերի ժառանգում

• Հետծլային ժամկետում կիրառելու դեպքում խմելու ջրի աղտոտման վտանգի և, հետևաբար, թռչունների համար ռիսկի առկայություն




Մորմ սև



Խաբբուկ սովորական



Խուլ եղինջ մանուշակագույն



Վահշիժակ պարսկական



Կաթնբեկ դաշտային

• Մի շարք մետաբոլիտներով ջրային պաշարների աղտոտման վտանգի առկայություն

• Երկարատև ազդեցության արդյունքում բարձր ռիսկ ջրային օրգանիզմների բոլոր խմբերի համար և երկարաժամկետ վտանգներ բուսակեր թռչունների և մարդկանց համար



• Երկկենցաղների մոտ մետամորֆոզի արագացման հավանականություն

• Բարձր ռիսկ ձկների զարգացման համար

• Դժվարություններ, որոնց բախվում է տեղի բնակչությունը համապատասխան անհատական պաշտպանության միջոցների ձեռքբերման հարցում

• Շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումների համակարգի բացակայություն, որը նախատեսում է բուֆերային շերտերի առկայություն քիմիական նյութերով մշակված դաշտերի և ջրահոսքերի միջև

• Խմելու նպատակով մակերևութային և ստորերկրյա ջրերի օգտագործումը որպես ռիսկ մարդկանց և կենդանիների համար

• Բուսական ծագման սննդամթերքներում փացորդային քանակների որոշման արդյունավետ մեթոդի բացակայություն

Առողջապահական մտահոգություններ

Ացետոքլորով սուր թունավորումը դրսևորվում է երբեմն քայլվածքով, ջղաձգումներով, ձեռքերի դողով, թքի արտազատման ավելացմամբ, փորլուծությամբ:

Քրոնիկական թունավորում. ացետոքլորը դասակարգվում է որպես հնարավոր քաղցկեղածին: Այն ալաքլորի նման կարող է քթախեցիների քաղցկեղի պատճառ դառնալ: Բացի այդ, ացետոքլորը կարող է հանգեցնել վահանաձև գեղձի քայքայման:

Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ացետոքլորի և դրա մի շարք մետաբոլիտների ազդեցության վտանգավորության, այդ թվում՝ ստորերկրյա ջրերի և բաց ջրային մարմինների աղտոտման բարձր ռիսկի մասին հավաստող տվյալները հիմք են տալիս դիտարկելու նշված թունաքիմիկատը որպես թեկնածու՝ Ստոկհոլմի կոնվենցիայով արգելման ենթակա թունաքիմիկատների ցանկում ներառելու համար:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Բարձր վտանգավորության թունաքիմիկատների հիմնախնդրի դիտարկումը» ծրագրի շրջանակում:

«Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Շինարարների փող. 18, բն. 52
Էլ. փոստ՝ info@ruraldaf.am
Վեբ կայք՝ <http://www.ruraldaf.am>